ի վանացն՝ այս Իլախի աշխարհի։ Եւ յորժամ իմացաւ անօրէնն Պօրիս՝ զի փախուցին, կալաւ զարեղայքն և գլխատեց 700 արեղայքն. և այս Տիմիդր եկն առ Թագաւորն Զիկմունդ առ ոտն. և Թագաւորն ընկալաւ զնա սիրով, և ետ պարգեւս նորա. և Տիմիդր եգիտ իւր զոմն մեծ իշխան, որ էր Իլովի սդարոսդա, որ կոչի Մնիշէք, և աղաչեաց զնա՝ զի օգնական լիցի նմա այս մուժ (չփոթ) ժամանակի, որ զիւր հայրական իշխանութիւն գտցէ։ Նորին պատճառաւ եղեւ նմա իբրեւ զհայր, և զինքն ընկալաւ իբրեւ զորդէգիր, և ... (պակասէ)։

1606. Հայոց թվ. ՌԾԴ. Դեկտ. ԺԵ. օրն շաբաթ. Մեծ շարժ եղաւ ի Կամենիցս. զի ոչ ոք ի մարդկանէ լուեալ էր կամ տեսեալ. և այն օրն Լաթինացոց ազգն գիւրեանց զխոտորեալ զՄնունդն առնէին, և էր 22 ժամէն յետեւ (երեկոյին)։ Եւ այս եղեւ վասն ծովացեալ մեղաց մերոց. բայց, գոհութիւն Աստուծոյ, որ անվնաս եղեւ, բնաւ ինչ չի վնասեաց. զոր Տէր Աստուած զվերջն ի բարին կատարէ, և զչարն խափանէ. ամէն։

1606. Հայոց թվ. ՌԾԵ. Պարոն Տէր Կարապետ Բարունապետ արհի եպիսկոպոսն նստաւ ի յեպիսկոպոսութեան վերայ Իլովի քաղաքին և ի Կամենից քաղաքին վերայ. Քրիստոս ամենակալն զիւր տիրութիւնն բազմաժամանակեայ չնորհեսցէ, և հաստատեսցէ վերայ սուրբ աթոռ(ոյ) իւրոյ. և Փրկիչն ամենայն աշխարհի փրկեսցէ զնա իւր մարդասիրութեամբն ամենայն ներհակաց և պատահմանց յերեւելի և յաներեւոյթ թշնամոյն, մինչեւ ի խորին ծերութեան ժամանակն. ամէն։ Եւ էր թվ. ՌԾԵ. մարտի 15, եկաւ ի Կամենից։

1607. թվ. ՌԾԶ. Հոկտ. ամսոյ Դ, օրն կիրակի։ Տէր Կարապետ վարդապետ աթոռակալ եպիսկոպոս վաղճանեցաւ. Աստուած ողորմի իւր հոգւոյն։

1608. թվ. ՌԿԷ. Նստաւ յեպիսկոպոսութեան Ֆռանգի՝ գժօնց Բրուխնիցքից, ի Կամենից քաղաք։

1607. թվ. ՌԾԶ. — Օլախի պարոն Երեմիայ մեռաւ, և փոխանակ նորա նստուցին ի պարոնութիւն զորդին իւր զԿոստանդին։

1608. թվ. ՌԾԷ. եկաւ վոյվոտա Բոտոլաքից, որ կոչի Բրէդվից. ընդ նմա և քաշդալան (castellan, բերդապահ) Բոդոցքից Եէնորից. մեծ ուրախութիւն կատարեցին, ընդ առաջ ելանելով, թոփեր հարելով։

1609. թվ. ՌԾԸ. — Մեծ և ահագին պատուհաս եկաւ ի վերայ Օլախայ պարոնաց. զի կամեցան սպանանել զՕլախի պարոն զԿոստանդին վոյվոտա. միաբանեցան եպիսկոպոս հետ իշխանաց. իսկ նա հնարիւք զրանն իմացաւ, և կալաւ զեպիսկոպոսն և գլխատեաց, և եպիսկոպոսն մատնեաց զիշխանն, և ետ զամենեսեան գլխատել, և էին թուով երեսուն. ամէն մեծ իշխան.